

Բաւական լաւ պահուած հատոր մըն է ձեռագիրս, կաշեկազմ, միջակ գրիւք, երկայնութիւնն է՝ 21 հարիւրորդամէտր, լայնութիւնը 19 հարիւրորդամէտր, իսկ թանձրութիւնն 3 1/2 հարիւրորդամէտր:

Թուղթը բամբակեայ է. գիրը նոտր՝ բաւական մաքուր եւ ընթեռնելի. ամբողջ հատորը կը բաղկանայ 252 թերթէ, մինչ գրուածքը պարունակուած է 318 էջերու մէջ, որք երկսիւն են:

Մինչեւ 66րդ թերթը բժշկարանը գրուած է երկու էջի վրայ, իսկ 67րդ էն սկսեալ մէկ էջի վրայ, որով 66 թերթ երկիջեան, եւ 186 թերթ միէջեան գրութիւն է ընդ ամէնը:

Կազմը թէեւ հին, սակայն երկրորդը կամ երրորդն ըլլալու է, վասն զի տեղ տեղ էջերու առաջին կամ վերջին տողերը կէսէն կտրուած կ'երևին, որով կրնանք ենթադրել թէ՛ ձեռագրիս ընդօրինակութիւնը դար մը, եւ թերեւս աւելի առաջ եղած ըլլայ:

Բժշկարանս ունի նախ՝ Յառաջաբանութիւն մը, որմէ թէեւ մաս մը քանիցս անգամ հրատարակուած է, բայց այս անգամ իւր ամբողջութեամբն հոս գրել հարկ կը համարիմ, անոր կարեւոր յիշատակարաններուն համար:

“Յառաջաբանութիւն մատենիս

“Ուսումն բժշկութեան այս է,

“Յանուն աստուծոյ գթածին եւ ողորմածին, որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:

“Գոհանալով փառաւորենք զնա որ զարարածս ստեղծեաց զերկինք եւ զերկիր զմարդ եւ զանասուն եւ զամենայն կենդանի, եւ զամենեսեան կերակրեաց իւր շնորհիւն եւ նմա փոք յաւիտեանս, Ամէն:

“Եւ այսպէս էր գրեալ գրիս շինողն թէ յորժամ ես այս արհեստիս հմուտ եղայ եւ տեսայ շատ գրեանք որ շինած էր ի յայս արհեստն եւ շատարանած, եւ մարդ կատարեալ չէր յիմանար եւ չկար գիրք որ ինքն փոքր եւ համառօտ եւ օգուտ լինէր եւ մարդ օգտէր որ ինքն հեշտ լինէր եւ փորձած եւ օգուտ: Եւ կամ եղեւ ինձ որ այս արհեստս շատ գովիցուցանեմք եւ գրեմք զբժշկութեան չաքսն, եւ զստուգուսաթն, որ է տարերքն, հուրն, օդն, ջուրն, հողն, եւ զմիզածն՝ որ է բնութիւնն, զխառնուածն, որ է սալտան, եւ պալղամն եւ արիւնն, եւ սափրան, զստեղծուածքն մարդուն, եւ զկազմութիւնն ամենայն, անդամոցն, եւ զթպտիրն առողջութեան, եւ ճանաչել զերակն,

եւ զգողն, որ է դարուրան, եւ զձեռնալուան, եւ զպօհրան, զմահու եւ զկենաց նշաննին եւ զստածումն ամենայն խլտին ի մի տեղ, եւ զատ ի զատ զբնութիւնն, եւ զօրութիւնն՝ զշահն, եւ զնշանն առաջագիտութեան ամենայն հիւանդին, եւ գիտենալ զօգերին ամենայն, եւ զտարուն գեղանակն, եւ զբնութիւն նոցա. եւ զպատճառն, եւ նշանն Ա. Ա. ին եւ խառնվածին, եւ շինել զխառնված դեղերն՝ որ է թարքիպնին:

“Յայսպէս գիրմն շինեցի ես անպիտան եւ անարժան նուաստ ծառայս աստուծոյ ամիրտողվաթ բժիշկս ամասիացի ի մայրաքաղաքն ի Ֆիլիպիա, ի թուականութեանս Հայոց, ԶԺԵ. ամին եւ ամսոյն ի դեկտեմբերի ԻԵ. ին օրն հինգշաբթին՝ եւ ծնունդն էր փրկչին այլ ազգաց. եւ այնչափ որ իմ ուժն ընկերեց. նա ջանացի զսա կատարել, եւ ո՛վ կարգայ կամ օրինակէ, թէ՛ եկեղեցական է, թէ՛ բժիշկ է մի խափանէք. եւ ո՛վ ջանայ որ կտրէ մի թուղթ ի սմանէ եւ կամ գողանայ նա բանագրած է, ՅԺԸ, հայրապետացն, եւ ջանացէք որ զբանագրանքն չի ընդունիք եւ զինչ որ գրած է զայն արարէք:

“Զայս գրոցս անունն անուանեցէք օգուտ բժշկութեան, որ տաճիկն (քիֆայէթի տիպ) ասէ, եւ արարի զայս գիրքս երկու բաժին, եւ առաջի բաժինն է՝ ուսումն բժշկութեան, եւ թպտիր առողջութեան եւ ստածումն ամենայն անձինն, եւ Բ. բաժինն յիշէ զկերակուրն եւ զդեղերն նորա որ մէկէն խառնված եւ զբնութիւն եւ զօգուտութիւնն՝ եւ զօրութիւնն եւ զչափն առնելուն եւ զփոխան ամէն մէկին՝ համառօտ ժողովեցի եւ գրեցի զհին եւ զնոր բժշկապետացն զխօսքն, որ զամէն մէկին անունն ի յիր տեղն պիտի յիշենք: Եւ արարաք զայս ի վերայ այբուբենի կարգաւ:

“Եւ յառաջն ի վերն ցաւուն անունն է գրած, եւ ի ներքեւն զցաւուն պատճառն է գրած, եւ զնշանն, եւ ի ներքեւն զստածումն է գրած, եւ ի մէկ երեսն զտաքէ եղածն է գրած, եւ ի մէկ այլ երեսն զպաղէ եղածն է գրած, որ կարգացողն հեշտ լինի:

Եւ զգեղիանոսի զխօսքն է ընտրած որ ասացել թէ բժշկին քան զչորս իրքն անցել այլ ճար չկայ. յառաջն որ գիտենայ զպատճառն թէ ինչ պատճառէ է, եւ ի խառնվածոց է, թէ յարինէ է. թէ սափրայէ է, թէ պալղամէ է, թէ սալտայէ է, եւ որ անդամն է ժողվել, եւ ինչ պատճառէ է որ ժողվել է: